



Վրեժ Մխիթարյանը հանդիսանում է դասավանդման և խորհրդատվության մեծ փորձառությամբ ՀՀ հարկային օրենսդրության արհեստավարժ մասնագետ:

Նա պարբերաբար անցկացնում է հարկային օրենսդրության խորացված դասընթացներ և սեմինարներ գլխավոր հաշվապահների, աուդիտորների և այլ ֆինանսական մասնագետների համար, ինչպես նաև անցկացրել է հարկային և հաշվապահական կորպորատիվ դասընթացներ հանրապետության առաջատար խոշոր ընկերություններում:

2011թ.-2016թ. դասավանդել է Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցացիայում (ՀՀԱԱ) որակավորման ծրագրի «ֆինանսական հաշվառման հիմունքներ» և «ՀՀ Հարկային օրենսդրություն» առարկաները: Հանդիսանում է նաև ՀՀԱԱ հարկային օրենսդրություն դասագրքի համահեղինակ:

2017թ.-առ այսօր դասավանդում է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում «Հաշվապահական հաշվառում և հարկային օրենսդրություն» և «Աուդիտ և ներքին վերահսկողություն» առարկաները:

Որպես իր մասնագիտական ունակությունների հաստատում Վրեժ Մխիթարյանը 2009թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացել է աուդիտորի որակավորում և հանդիսանում է Հայաստանում այդ որակավորման ունեցող առաջատար մասնագետներից մեկը: